

կերպով նկարագրում է ինքնամահւան ընթացքը, տանելով այդ պարապութեան, աշխատութեան և սովոր միջոցով, պարապութիւն, ձանձրոյթ—մահ. թւում է թէ կարդում ևն մի հոգերանական երկ, լուս խորհրդածութիւններ, որոնք ունեն իրական և լուրջ հիմունքներ, այդ է պատճառը, որ Խէնի պատմուածքը ունի մեծ բովանդակութիւն և ամբողջական բնոյթ:

Սլմանախը որքան էլ թերութիւններ ունենայ, այնուամենայնիւ գովելի է ձեսնարկողների եռանդը, և մնում է փափազել, որ «Պատանիի» տէրերն աշխատէին Սլմանախը պահել միայն սկանակ գրողների դրական—զեղարուեստական աշխատանքների համար:

Ա. Հախ.

— 522 —

«Արարատ» ամսագրի պատուարժան խմբագրութեան.

Նոր-Նախիջեանցի Մեծապատիւ պ. Յովհաննէս Մարտիրոսեան Շապոշնիկեանը, անցեալ տարուայ սեպտեմբերի 30-ին լինելով ս. Էջմիածնում, նուիրեց Մայր Աթոռի Գէորգեան Հոգեւոր Ճեմարանի մատենադարանին Հինգ հարիւր (500) ըուրլի «Հայ ազգի անցեալ եւ ներկայ կեանքի վերաբերեալ ուսումնասիրութիւններ բոլոր լեզուներով» բերել տալու «հայագիտական լրիւ եւ ծովս մատենադարան կազմելու համար»: Նուիրատու պարոնը խոստացաւ այս յունուարին կրկին 500 ըուրլի ուղարկել և այնուհետեւ իւրաքանչիւր տարի որոշ գումար նոյն նպատակով յատկացնել:

Յայտնում եմ խորին շնորհակալութիւնս նուիրատու պ. Յ. Շապոշնիկեանին այս օգտակար դործի համար, որի կարիքը միշտ զգացուել է Գէորգեան Հոգեւոր Ճեմարանում:

Տեսաւ ձեմարանի՝ Բագրատ Վարդապետ

43 յունուարի 1915 ամի,

Ս. Էջմիածին